ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 09-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան **«09» հունիսի 2023թ.**

2023 թվականի հունիսի 09-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության (այսուհետ՝ Տեսչական մարմնի) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են ԿԽ-ի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.
2. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

Քվեարկությանը մասնակցում էին՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա.Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող
Ա"Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա.Ավանեսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Տ. Բաբայան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Տ. Քեյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ

Դ. Սողոմոնյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ս. Թովմասյան - Կադաստրի կոմիտեի ղեկավար

Ն.Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 10 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և հավանություն տալուց հետո ԿԽ-ն որոշեց.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունն ընդունել ի գիտություն.
2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագիծը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ն. Մելիքսեթյան**